


հետեւելով կամ ոչ ճշմարտութեան, թէ՛ս, քանի մեծ պատասխանատուութեան ենթակայ է նա որ իւր նմանւոյն հետ՝ իբրեւ անբան և անշունչ արարածոց հետ կը վարուի, ստորին էակաց գասն իջեցընելով զայն, որոնք զուրկ են պատասխանատուութենէ, և բնական ճակատագրի մի օրինաց ենթարկեալ: Ի՞նչ օգուտ է մարդոց արտաքին ազատութիւնը, երբ նա իւր ներսիդին՝ իւր հոգւոյն և մտաց մէջ գերի է, երբ նա իւր մտաց թեւադրութեան չէ ազատ հետեւելու: Ասով ուրիշ բան չենք կարող ընել, եթէ ոչ մարդոցս վրայէն պատասխանատուութիւնը վերցընել, և բարոյական էակը նիւթոյ իշխանութեան տակ ձգել:

Արջանիկ պիտի լինի այն դարը, և ես արդէն կ'ողջունեմ զինքը, երբ իմացական լոյսը ընդհանուր սփռելով բարոյական աշխարհիս վրայ, և Աւետարանի ճշմարտութիւնը բոլոր իւր վեհութեամբը թագաւորելով իւրաքանչիւր մարդ ազատ պիտի լինի հետեւելու իւր ըւտաւորեալ խղճին. և այն ժամանակիս մէջ մարդկութիւնը իբրև մի մարմին և մի անձն մշտնջենապէս պիտի տիրէ, ինչպէս Ադամ փափկութեան դրախտին մէջ, և աշխարհս ազատ պիտի լինի ամեն կերպ անիրաւութիւններէ և զրկանքներէ, որոնք ՚ի նախատինս մարդկութեան անխղճաբար կը գործուին երկրիս վրայ:



ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն, տես թիւ 11.)

Այն բողոքս ընդունուեցաւ, եւ Վսեմ, Ապղիֆ փառայն ալ մեր իրաւունքը քաջ ճանաչելով կ'ուզէր մեր զրկանացը վերջ մը տալ, կամ դոնէ խաղաղասիրական միջոց մը գտնել, վասն զի կը վախնար միանգամայն, զի տեղով Աստին կղերին ժամանակ ժամանակ ըրած յանդուգն ձեռնարկութիւններն, և անոնց մէջ որ և իցէ կերպիւ յաջողելին, վասն որոց չլըստահեցաւ կտրոզական պատասխան մը տալ: Արբ միջոցը երկու օր մնաց Աստինաց գալուն, Վսեմ, Ապղիֆ փառայն իւր Թարգման Ստիրեատիս էֆէնտիին հետ մեր վանքն եկաւ տեսութեան պատճառաւ, եւ սոյն խնդիրը ինքը բացաւ մեզմէ յառաջ, և ըսաւ. «Չեր բողոքը կարդացի, իրաւունքնիդ արդար է, և ես պարտաւոր եմ իմ Տէրութեանս հարտակոց իրաւանց վրայ օրինաւոր հրահեմ: Այլ բան մըն ալ կայ որ, այն ալ պէտք է մտածեմք, ետքը քաջ ետեւաբէն, կեող շքաբանայլը: Այս Աստին կղերաց արարքներն և բնութիւնն դուք մեզմէն լաւ գիտէք, ասոնք երբ իմանան թէ իրենց այս սովորութիւն պիտի խախտուի, թէ և արդարութեամբ, բայց անոնք բոլոր աշխարհ վիճակի կուտան, նախ դեպքանին, ապա Բաբային, յետոյ բոլոր Աւրոպիոյ տէրութեանց սուտ ու սխալ անգեկութիւն կուտան: Այս մանաւանդ, ահա երկու օր մնաց անոնց գալուն, ամեն բանէն յառաջ իրենց բնական եղած ազատամբական ոգին ձեռք պիտի առնեն, բունն զօրութիւն պիտի յարձակին ձեր վրայ, և ես պիտի սարտաւարուիմ միջամտութիւն»

ընել զօրք իրկելով, և իրենց սովորութիւնն կատարել տալ, որով աւելի գէշ կ'ըլլայ ձեզ, ահա ստոր համար եկայ որ պէտք եղածները ձեզ խօսիմ, որ և դուք ըստ այնմ պատրաստ գըտնուիք :

Հրամայեցէք Փաշա էֆէնտի ըսի, մեր ինչպէս գանուելուն եղանակը մեզի ծանուցանել, որ մենք ալ իմանամք, և եթէ արդար և օրինաւոր է և մեր իրաւանց չդպչիր, պարտաւոր եմք ընդունել և գործադրել իբրեւ հարազատ հպատակ տէրութե՛ն. բայց տար Մտուած որ Չեր Ասեմութեան ըսելիքներն ալ հարազատ և հաւատարիմ հպատակի արժանաւոր ըլլային, և անոր արդար իրաւանց պաշտպանութեանը օգտակար :

Հարունակեց Վսեմ, Նազիֆ փաշայն. «Վուք Չեր սուած բողոքով կ'ուզէք որ տէրութեան զօրքը չգայ ձեր վանքին դիմացը, և զպղծիէներ չկայնին եկեղեցւոյ փակին մէջ, հիւպատոսը համազգեստով չգայ, և իրեն յատկացեալ պաշտօնական աթոռը հետը չբերէ, ասոնք չե՛ն ձեր արդիւլել ուզածնիդ տուած խնդրագրեր նուդ համեմատ : »

Մյո՛, պատասխանեցի : — «Մտնց ամենն ալ ոչ ինչ բաներ են, ըսաւ Վսեմ. Նազիֆ փաշայն, մտիկ ըրէք որ ձեզ բացատրեմ : Նախ՝ կը ցաւիք և չէք ուզեր որ տէրութեան կանոնաւոր զօրքը և զպղծիէք ձեր վանուց դիմացը գան այն օրը. ասկից ի՛նչ կ'երէ, զօրքը Վաղղիոյ տէրութեան զօրքը չէ, այլ մեր տէրութեան, որուն հովանաւորութեան տակ կը գանուիք դուք, այս աւելի ձեզ օգտակար և պատիւ է, ասկից երբէք վնաս մի չկրնար ծնանիլ, ուրեմն ասոր համար այսբան տաղնապիլ և ասգին անդին իյնալ բողոքելնիդ աւելի :

Արրորդ, Վաղղիոյ հիւպատոսին համազգեստով գալը, ասկից և ս ի՛նչ վնաս կրնայ ծագել, համազգեստով կամ առանց համազգեստի եկեր է, ինքը գիտէ, ինչպէս կ'ուզէ թող գայ, եթէ պատիւ և եթէ անարգութիւն իրենն է, քանի որ ինքն կ'ընդունի և կ'ընէ՝ ինքը գիտէ, ասկից ալ ձեր իրաւունքին պայչելու բան մը չեմ նըշմարեր, վասն որոյ խօսելնիս անգամ չարժեր. ըսելը աւելի լաւ է՝ որ վերջը ըլլալիք գէշութիւններէ ազատ կը մնաք :

Արրորդն է, Վաղղիոյ հիւպատոսին իրեն յատկացեալ աթոռը հետը բերելը. այս եւս ՚ի կարգի միւս խընդրոց նկատել պարտիմք : Այն աթոռը բերելը չբերելը բան մը չգոյացներ, եթէ բերած աթոռը կրկին ետ չտանի եւ ձեր եկեղեցին ձգէ տեղ մը յատկացնելով, այն ժամանակը իրաւոր ձեր իրաւանց դպած կ'ըլլայ. քանի որ կըտանի, անկից ալ վտանգ մը չկայ : »

Մյո խօսքերը քանի որ Վսեմ, Նազիֆ փաշայն կը խօսէր, իրեն թարգմանն ալ միշտ՝ Մյո՛, այնպէս է, այս բաներուս վրայ բան խօսելը անգամ աւելի է, այս բաներուն մէջ վնասակար բան մը չկայ, քանի որ կուգան և գալու սովորութիւն ունին, ինչպէս կ'ուզեն այնպէս գան, ինչ կ'ըլլայ, կ'ըսէր : — Արդեօք ձեր ըսածները լրացուցիք հարցուցի Վսեմ. փաշային : — Մյո՛, պատասխանեց Նորին Վսեմութիւնն :

Սկայ խօսել յետոյ այսպէս. կ'ընդունիմ Չեր Վսեմութեան ըսածները՝ երբ նոյն ըսածիդ համեմատ իմ ըսելիքներուս ալ այդպէս դատատան ընէք և իրաւունք տաք : Սեզի ալ սովորութիւն եղած է, ինչպէս վերն ալ յիշեցաւ, ամեն տարի Մյո՛-

Քերիմ (Յովհաննու ծնունդ) ըս-
ուած գիւղին մէջ իրենց սեպհական
եկեղեցին երթալ շարունակ ամեն
տարի երեք չորս՝ երբեմն եթէ ուխ-
տաւորնիս շատ ըլլայ՝ մինչեւ հինգ օր
մաս առ մաս կը տանենք հրաման
առնելով իրենցմէն՝ ինչպէս իրենք ևս
հրաման կ'առնեն մեզմէն մեր սուրբ
Յակովբ և սուրբ Փրկիչ եկեղեցի-
ները գալու համար :

Այսուհետեւ ես ալ պէտք է ըս-
կրսիմ Յովհաննու ծնունդ երթալու
օրերը Չեր Ա սեմու-թեանը լուր տար
որ ինչպէս Վաղղիոյ հիւպատոսին մեր
վանքը գալու համար զօրք կուտար,
վաղն ալ ես անձամբ Յովհաննու ծը-
նունդ պիտի երթամ, հիւպատոսին
համազգեստին տեղ իմ Տերու-թեանս
չնորհած շքանշանովը, անոր աթո-
ռին փոխարէն հետս մէկ պատրիար-
քական աթոռ սանելով իրենց եկե-
ղեցւոյ մէջ դնել նստելու, զօրքին
զօրք, համազգեստին համազգեստ,
աթոռին աթոռ, բայց սա առաւել
լու-թեամբ որ իմ իրաւունքս պահ-
պանելով ձեր պարտքը կատարէք, որ
է՛ նկատել հիւպատոսին աստիճանն
և իմ, անոր օտար տէրու-թեան պաշ-
տօնեայ ըլլալն և իմ մեծագոր (Օս-
մանեան Տերու-թեան հաւատարիմ
հպատակ և ընդհանուր Ազգի մը Պատ-
րիարք ըլլալս, և նմանապէս Տերու-
թեանս հրովարտակով ՚ի պատիւ Հայ-
ոց ազգիս շնորհած արտօնութիւննե-
րըս: Աթէ ճիշտ այս նկարագրութեա-
նըս համեմատ փոխարէն հատուցանե-
լու խօսք կուտար, և այն ո՛չ միայն
բանիւ՝ այլ և Չեր Ա սեմու-թեան և
անոնց ստորագրութեամբը, իսկոյն
հաճութիւն պիտի տամ, քանի որ որ
տեւէ մեր ուխտաւոր տանելը անոնց
եկեղեցին, ուր առաջին օրը անձամբ
ես կ'երթամ՝ նոյն հանդէսով և պատ-

րաստութեամբ, երկրորդ օրը փո-
խանորդս կը խրկեմ, երրորդ օրը այլ
ք Նյուխիպոս, օր մի ալ թարգմա-
նըս կը խրկեմ: Աթէ այսպէս կը հա-
ճէք և կը հաճին: Ատինք, հիմակու-
նէ իմ հաճութիւնս տալով՝ Չեր
Ա սեմու-թեանը լուր կուտամ որ նոյն
արարողութիւնս կատարելու համար
զօրք պատրաստէք, և տեղն ալ եր-
կու ժամէն աւելի հեռի ըլլալուն
համար՝ այսօրընէ սկսիք հան տեղ մը
պատրաստել զօրաց պատասպարու-
թեանը համար :

Այսմ. Ազգի՛ք փաշայն այս բանին
վրայ բաւական մտածելէն զկնի ը-
սաւ. « Իրաւունք ունիք այս բանին
մէջ, և իմ պարտաւորութիւնս է
որ ձեզի ալ զօրք տալով ձեր իրաւուն-
քը և պատիւը պահպանեմ, բայց
երկու ժամէն աւելի տեղ զօրք խրու-
կել՝ այդ դժուար է, եթէ մէկ օր ըլ-
լար գոնէ՛ կարելի էր, և այն տեղ
զօրքը եթէ մնայ՝ տեղ չկայ, եթէ վե-
րագառնայ, դարձեալ երթալ կարե-
լի չէ ամէն օր, այս ալ չեղաւ : »
Վարձեալ աշխատեցաւ որ զմեզ հա-
մազէ առջի ըսածին վրայ :

Արկնեցի ես. Աթէ այդ բանը ձեզ
համար անկարելի կը թուի կատարել,
ուրեմն կ'երեւի թէ Վաղղիոյ հիւպա-
տոսին խնդրանաց համեմատ անցեալ
տարուան պէս դարձեալ զօրք պիտի
տաք: — Այո՛, ասաց բզեչին: — Տուէք
մնաս չունի ըսի. թող գայ զօրքը վա-
նուցս դիմացը շարուի, առաւօտուն
հիւպատոսին գալու միջոցները ես
անձամբ վար կ'իջնամ, զկնի զօրաց
գլխաւորը բարեւելոյ՝ կ'ըսեմ իրեն.
Այլ խրկեց զձեզ, զօրապետ տէր, և
խնջ պաշտօն կատարելու եկած էք
հոս. ՚ի հարկէ պիտի բսէ, հրամա-
նաւ Այսմ. Փաշային եկած եմ,
որ Վաղղիոյ հիւպատոսին գալուն

զորքերս բարեւ բռնեն 'ի պատիւ երեսաց նորս - Բաց այս երկու կտոր հրամաններէ՝ ուրիշ հրաման ունիք ձեր Վ սեմ. Փաշայէն, կը հարցնեմ իրեն, 'ի հարկէ պիտի ըսէ՞ ոչ. ուրեմն, զորապետ տէր, դուք միայն ձեզ հրամայեալ պաշտօնը լաւ կատարեցէք ամենայն զգուշութեամբ, և եթէ ուրիշ բան պատահի ձեր և Վ տինաց մէջ ձեր հոս եղած ժամանակ, կը խնդրեմ միջամտութիւն չընէք, վասն զի՝ ինչպէս ձեզ ձեր տիրոջմէ տրուած պատուէրը ընդունելի է և պարտաւոր էք ըստ այնմ գործել և հսկել, և ես ձեզ նման զորապետ մի եմ մի և նոյն մեծազօր Տէրութեան կողմէն ընդհանուր Վրդիս հաճութեամբ ազգային սեպհականութիւններս պահպանելու և հսկելու համար. իմ վեհափառ Տէրս թագաւորը իւր հրովարտակոյլը զիս նուաւորս այս բոլոր սեպհականութեան վրայ Պատրիարք և զորապետ կարգած է, և սաստիկ պատուէր տուած է որ իմ ազգային իրաւունքներուս վրայ հսկեմ, վասն զի իւր իրաւունքները կը սեպուին՝ քանի որ ես անոր ողորմած հովանաւորութեան տակն եմ զինի Վստուծոյ : -

Չորապետաց այսպէս ըսելէս ետքը պէտք եղած պատրաստութիւններն կը տեսնեմ. իւր հիւպատոսին դարձեալ համազօգեստով և աթոռով գալը իմանալու՝ թարգմանս կը խորհեմ իրեն ըսելու թէ, Պատրիարք բարեկամնիդ ձեզ լուր կուտայ իմ բերնովս թէ, ինքը Օսմանեան Վեհափառ Թագաւորին հպատակն է, երբէք չուզեր որ Հայոց ազգին իւր վերայ ունեցած հաւատարմութիւնն ամենափոքր բծով անգամ աղարտել, որ վասն չկրնար ձեր Վ սեմութիւնն այսպիսի պաշտօնական հանդերձիւ

Ե

(ունիֆօրմայով) և աթոռով ընդունիլ, եթէ պարզ հազուստով կը բարեհաճիք զմեզ պատուել՝ հրամայեցէք : Այլ թէ զինի այս դարձեալ շարունակելու իւր գալուստը, իսկոյն լուր կուտամ պատրաստած մտորկանց որ վանուցս երկաթեայ դուռն վառեն, բանսիքներն ինձ բերեն, ինչպէս ըրաւ մօտ տարիներս իրեն սեպհական եղած Վատին եկեղեցոյ Պատրիարքը, սուրբ Յարութեան դուռն աւոր երեսին փակել տալով՝ հանդիսաւոր օր մը նոյն հիւպատոսին կտրէ դուրս զօրք բերելուն համար :

Վստրալ վերջը գէշ եկաւ, ըսաւ Վ սեմ. Փաշայն, այդպէս ալ աղէկ չէ : - Վաւ ուրեմն, ըսի, ես բոլոր միաբանութիւնս ժողովեմ իմ սեպհական վանքէս դուրս ելլեմ, թող Վատինք գան տիրապետեն, վասն զի այս Չեր բռնած ընթացքը այդ ըսել է. քանի որ դուք, որ այսօր իմ Վեհ. Թագաւորին ներկայացուցիչն էք և պարտիք իմ այս տագնապիս մէջ զիս ամենայն կերպիւ պաշտպանել, դուք ոչ կամիք, և ինձ ոչ թոյլ տաք իմ սեպհականութիւնս պաշտպանելու համար ընելիքներս ընել : »

Դարձեալ Վ սեմ. Փաշայն բարեմտութեամբ կ'աշխատէր իւր թարգմանին հետ զիս համոզելու, բայց քանի որ իրաւունք մի կորսնցնելով պիտի ըլլար, իմ համոզուիլս ալ անկարելի էր, և անկարելի եղաւ :

Դարձեալ ստիպեալ Վ սեմ. Փաշային այս խաղաղասիրական միջոցէս, որ երբէք չէր ուզեր զիմադրութեան նշոյն անգամ ցոյց տալ Վտինաց կամ հիւպատոսին, պարտաւորեցանք երրորդ եղանակ մի եւս մտածել, և ատցի. - Վաղուան օր լուր կուտամ Չեր Վ սեմութե թէ՛ Վատինք պիտի գան մեր եկեղեցին

պաշտօն կատարելու , այսուհետեւ անոնց վրայ վատահուծիւն չունիմ , քանի որ այսպէս անիրաւ յարուցմունքներ կ'ընեն , ոյր վասն վաղուեան օրը ինձ տասն հատ քաղաքապահ զօրք շնորհես վանուցս դուռը գտնուին . այսպէսով Ա՛ սեմ . Հիւպատոսին ալ եկած ժամանակը բարեւ ալ բռնելու զօրք խրկելէն կ'ազատիք : Բայց երբ Պ . Հիւպատոսը ձեզմէն զօրք ուզէ , պէտք է ըսէք՝ որ Հայոց Պատրիարքը լուր խրկած էր որ այսուհետեւ Ա՛ տինաց վրայ հաւատարմութիւն չունիմ , վասն որոյ վաղուան օրը ինձ տասն հատ քաղաքապահ զօրք շնորհք ըրէք և խրկեցի . և ահա հոն զօրք կան . Ասորին Ա՛ սեմութիւնն ալ եթէ երթալու ըլլայ՝ բարեւ ալ պիտի բռնեն , ուրիշ զօրքի կարօտութիւն չունիք ըսելով՝ զօրք տալէն կ'ազատիք , զուր տեղը Տէրութեան զօրքերն ալ չէք յոգնեցըներ :

Ալ է այս եղանակն , ըսաւ Ա՛ սեմ . Փաշայն զօրաց մասին , այլ Հիւպատոսին ծնիֆօռմայով գալուն և ակոռ բերելուն մասին ինչ պիտի ընէք և ինչ եղանակ պիտի բանեցընէք , աւտոնք ալ այսպէս դիւրին կերպիւ պէտք է լուծել :

Ասացի , այն երկու տեսակ սրաշաօնական անիրաւութիւնն ուրիշ միջոցաւ չեմ կրնար լուծել , եթէ ոչ վերոյիշեալ եղանակաւ , զոր այժմ պատմեցի Չեղ . ատոր լուծումը Պ . Հիւպատոսին ձեռքն էր , եւ շատ դիւրութեամբ եթէ կամենար՝ և եթէ իրեն բարեկամին ձեռք լուր տուած ատենս յանձն առնէր այնպէս առնել , նոյն խնդիրը իսկոյն իր դրժուարութեան մէջ պիտի լուծուէր . այլ նա չկամեցաւ , վասն որոյ պէտք է , ինչպէս վերը ըսի , այնպէս զինքն ալ և իր պաշտօնական ակոռն ալ ետ

դարձնեմ , ատոր ուրիշ միջոց չեմ գտնար , և կը խնդրեմ որ ալ զիս աւկից աւելի զիջում ընելու շատիպէք , վասն զի չպիտի կարենամ ընդունիլ , վասն զի մեծ վտանգ կայ իմ ազգային սեփականութեանս և Տէրութեանս պատուոյն , որոց և ոչ մին կրնամ զոհել՝ առանց Տէրութեանս և Ազգիս ամբողջութեան դէմ մեղանշելու :

« Աւրեմն ըսաւ Ա՛ սեմ . Փաշայն , այդ ձեր զօրք խնդրելու համար խրկելիք խնդիրդ այս իրիկունէն խրկեցէք , վաղուան շմնայ : » Ալ շատ չանցաւ ոտք ելաւ երթալու , ես դարձեալ կրկնեցի որ երբ Պ . Հիւպատոսը զօրք ուզէ իրենմէ , վերի ըսածիս պէս ճիշտ ըսէ թէ՝ « Հայոց Պատրիարքը լուր խրկեր էր որ վաղը Ա՛ տինք մեր վանքը պիտի գան , այսուհետեւ անոնց վրայ վատահուծիւն չունիմ ինձ տասն հատ քաղաքապահ զօրք տուր , և ես խրկեցի . և թէ՛ Պ . Հիւպատոսը եթէ երթալ կը բարեհաճի , պատուէր տրուած է անոնց որ բարեւ ալ բռնեն , ուստի ուրիշ զօրաց կարօտութիւն չկայ : Այսպէսով բաժնուեցաւ Ա՛ սեմ . Փաշայն բարեմաղթելով որ խաղաղութեամբ գլուխ ելէ գործս :

Այնչոք շատ չանցաւ թարգմանս խրկեցի նոյն քաղաքապահ զօրքերը հետեւեալ աւուր համար խնդրելու , գնաց եկաւ թարգմանս ըսաւ՝ վաղը ժամը վեցու կէս կամ եօթնին (Ար Այագուս) սուրբ Յակովբայ վանուց դուռը պիտի գտնուին ըստ խնդրանաց ձերոց :

Հետագայ օրը ժամը եօթներորդին տասն զօրք քաղաքապահ եկան կանգնեցան առաջի դրան վանուցս , երբ Ասախնաց ժողովուրդն ալ հետ զհետէ դալ սկսած էին , նոյնպէս և կարգաւորք և անկարգ միաբանք նու

ցա, եւ հանդարտութեամբ կատարելով երեկոցեան պաշտամունքը՝ ըստ սովորութեան իւրեանց մեկնեցան, թէ և առանց պղտի դժտութեան մի չանցաւ դարձեալ նոյն երեկոցեան պաշտօնն ալ. վասն զի իւրեանց շարժական փոքր երգիւնն զոր հետերնին բերելով սուրբ Ալիսադրի դրան ետեւը կը դնէին միշտ, այս անգամ դասին մէջ զետեղած էին: Այս որ լսեցի՝ իսկայն դուրս հանել տուի առաջին տեղն դնելու, թէ և այս փորձն ալ առաջին անգամը չէր, ուրիշ անգամ ևս ըրած են և միշտ դուրս հանուած է:

Սիւս առաւօտ ժողովուրդն կրուկին սկսաւ գալ, պատարագի ներկայ գտնուելու, և ես կ'ըստատէի թէ արդեօք Պ. Հիւպատոսը պիտի գայ դարձեալ ունիֆօռմայով, քանզի իմացայ որ իմ քաղաքապահ զօրք ուղեղէս ըզկնի, այն ալ դարձեալ կանոնաւոր զօրք ուղած է. մեծապէս շնորհակալ եմ Վսեմ. Նազիֆ Փաշայէն որ վերի ըսածնիս պէս ճիշտ պատասխանած է իրեն: Այլ ես պէտք եղած պատրաստութիւնները կարգի դնելէս ըզկնի, ինչպէս յիշեցինք վերը, Պատրիարքարանին պատուհանէն նստեալ կը դիտէի Պ. Հիւպատոսին գալուստը, և թարգմանիս ալ պատուէր տրուած էի որ քիչ մի հեռու անոր դիմացըն երթայ զինքը այն հագուստով և պաշտօնական աթոռով չընդունելու իմացընէ:

Հատ չանցաւ Պաղղիոյ հիւպատոսարանին գանչելէրը և թարգմանը երեւցան եւ ուղղակի իմ քովս եկան: Օկնի սովորական տեսակցութեան, ըսին թէ՛ Պ. Հիւպատոսը ձեր որպիսութիւնն կը հարցնէ, եւ ինքն անձամբ պիտի գար Պատարագին ներկայ գտնուելու, այլ փոքր

ինչ տկարութիւն ունեցաւ, վասն որոյ զմեզ խրկեց իր կողմանէ Չեր Սրբազնութեան հետ տեսակցելու, և այլն:

Ասացի մեծապէս շնորհակալ եմ նորին Յարգութենէն, որ բարեհաճեցաւ իր տկարութեան մէջ անգամ զմեզ չմուանալու. այլ ես այսպէս չէի ուզեր, ես կ'ուզէի որ Պ. Հիւպատոսը այսօր ըրածը երանի թէ քրտան օր յառաջ ըրած ըլլար, երբ իր միակ բարեկամին հետ առանձին իւրեն լուր տուի որ միայն Աստուած գիտէր, իրեն բարեկամը եւ ինքը. այն շնորհքը ինք բուռն զօրութեամբ պաշտօնական կերպով գործածել ուզեց Աստին կրօնաւորաց հաճոյանալու համար, եւ ելաւ կոյր զկուրացն պաշտօնական կերպարանք տուաւ:

Այժմ ձեր գալը Պ. հիւպատոսին կողմէն, և մեր որպիսութիւնն հարցնելը և Պ. հիւպատոսի տկարութեան պատճառաւ չկրնար գալը իմացընն ինչ, նաեւ այլ և այլ ձեւերով խօսելնիդ գիտեմ բոլորն ալ բոլորիքայ են, և այն՝ Աւրոպիոյ բոլորիքայ. մտիկ ըրէք աւրեմն, մենք թիւրք եմք, և թիւրքիացի, և Օսմանեան մեծազօր կայսեր ողորմած թեւերուն հովանաւորութեան տակ պատասխարեալ ազատ աւնելով մեր կրօնական պաշտամունքները: Սեր բոլորիքայն ուրիշ է, այսինքն, մենք խօսքը ասդին անդին դարձնել չենք գիտեր, ուստի մեր բոլորիքն է՝ վերջը ըսելիքնիս առաջ ըսել, որ սրտի մաքրութենէ յառաջ կուգայ, ըսեմ ուրեմն ձեր յարգութեանցը:

Ի՞նչ եղաւ և ի՞նչ յարգ կրնայ ունենալ հիմայ այս Չեր խրկուիլը մինչ այսօր սուրբ Արուսազէմի բոլոր բնակիչք իմացան և գիտեն, որոնց մէջ են նաեւ Աւրոպիոյ բոլոր տէրու-

Թեանց Հիւպատոսը, թէ ինչ անձ-
քեր անցան, եւ չուզեցով մեր բա-
րեկամութեան և սիրոյ կտայր խղել,
իմ պարտաւորութենէս աւելի զի
ջում ընելով իրեն լուր տուած էի
կանուխկեկ, որ առջի տարուան ըն-
թացքը չուէնէ, փոխանակ զի պար-
տաւորութիւն ունէր նա գոնէ մար-
դասիրութենէ ստիտեալ քանի որ տա-
նուտէրը տուելը չէր գտնուէր, նոյն
տան պատիւը պահել այլ նա ոչ թէ
միայն այս չըրաւ, այլ գրգռեալ Ա-
տին կրօնաւորներէն, Հայոց ազգին
վեհանձնաբար իր միակ եկեղեցւոյ
մէջ պատարագելու համար ըրած չը-
նորհքը, որ իրեն միայն բարեմտու-
թեան և անխարդախ եղբայրսիրու-
թեան արգասիքն էր, զայն չարաչար
գործածել ձեռնարկեց, մինչ ես Ա-
գիտոս էի, առանց մտածելու և
առանց խնայելու թէ՛ այս Ազգը այ-
սօր Օսմանեան բարխնամ կայսեր
հպատակ են, իմ նոյն վանուց դու-
ռը զօրք տանելը, իմ ունիֆորմայով
երթալը, իմ պաշտօնական Աթոռ
տանիս, նոյն ազգին իրաւանց կը
գտնէի, անոր հարազատ հպատակու-
թեան վրայօք կասկած կուտայ. եր-
բէք չուզեց մտածել ձեր Պ. հիւ-
պատոսը, այլ միայն Ատին կրօնա-
ւորներէն գրգռեալ անոնց կամքը
կատարել և անոնց աչքին հաճոյա-
նալ ուզեց, ոյր վասն այս աստիճան
իմ սիրաս վշտացուց, որ պարտաւո-
րեցայ այսօր փոխանակ ամենայն սի-
րով տեսակցելու և յարգանքներ տա-
լու ձեզ, իմ սրտիս վէրքերը բանալ-
— Արբէք այդ մտադրութիւնն չունի
Պ. Հիւպատոսը ըսաւ գանչելէրը,
և միշտ կը սիրէ զձեզ, եւ ձեզմով
բոլոր Հայոց ազգը, և պարտաւո-
րութիւն կը ձգէ ձեր վրայ որ կա-
րեւոր պարագայի մէջ իրեն դիմէք,

և ամենայն սիրով պատրաստ է օգ-
նել ձեզ, և թէ՛ կարելի եղածները
կատարելէ զինի անկարելի համարու-
ւածներն անգամ կարելի եղածին չափ
սիրտի աշխատի որ հնարաւոր ընէ : —
Ասացի՛ Պարոնայք, ձգե՛նք անկա-
րելիներն հնարաւորել, հասարակաց
առածը կ'ըսէ, գործքքո զքեզ գովեն,
և ոչ քո բերան, Այս գործը որ կա-
րելի էր և ամենակարելի և խիստ դիւ-
րին, և չըրաւ, ինչպէ՛ս հաւատամ թէ
անկարելի եղածներն անգամ հնարա-
ւոր ընէ. խնդրեմ՝ պատասխան տը-
ւէք ինձ, ընդհանուր Հայոց ազգին
միակ սեփհակսն եղած վանքին դի-
մացը կանոնաւոր զօրք բերելու, ին-
քրն ունիֆորմայով և պաշտօնական ա-
թոռով գալու ինչէ՛ն ստիպուած էր,
և մինչեւ ցայսօր տեսնուած էր և
լուսած էր. և դու բարեկամ (Հաննա
Պառլային*) իմ միաբանիս այս սուրբ
Աթոռն ջշ տարի է, եւ միայն նոյն
կերպը գիտեմ, և երբէք այսպէ՛ս պաշ-
տօնապէս գալ տեսած չեմ, իսկ դուք
ընիկ Այրուսազեմացի էք, և կրօնիւ Ա-
տին, քանի՛ տարի է որ խելքերնիդ կը
հասնի, գոնէ քսան կամ երեսուն տար-
ուան ծանօթութիւն չէք կրնար տալ
մեզի, ըսէ գոնէ որ քանչե՛կէր Պարոնը
համոզուի :
«Այլ թէ, ըսաւ Հաննա Պառլային, բը-
սան և երեսուն՝ այլ և քառասուն և
գուցէ յիսուն տարուան ծանօթու-
թիւն կրնամ տալ, որ երբէք եղած
չէր, ոչ զօրք բերել, ոչ ունիֆորմայով
գալ և ոչ պաշտօնական աթոռ բերել
և ոչ իսկ ամեն տարի հիւպատոսն կու-
գար, այլ երբեմն և այն իրեն հասա-
րակ հագուստով. ճշմարիտը այս է և
ամեն մարդ գիտէ այսպէ՛ս ըլլալը : —

*) Գաղղոյ հիւպատոսարանին թարգմանն է
ընիկ Այրուսազեմացի, իբրեւ 66—65 տարեկան
այր :

Վանի որ դուք բնիկ Արուսաղէմացի
ըլլալով, և քիչէն քիչ քառասուն տարւ
ւանը ձիւղտ գիտնալով որ երբէք այսպէս
արարք մը տեսած չէք, ըսէ ուրեմն,
ձեր Պ. Հիւպատոսը ինչէն սպկտեալ
այսպէս յանդուգն ձեռնարկութիւն
ըրաւ :

Կարձեալ հարցուցի նոյն Թարգ-
մանին, թէ «նոյն քառասուն կամ
յիսուն տարուան մէջ զոր դուք լաւ
գիտէիք, երդմնեցուցանեմ զձեզ յԱս-
տուած կենդանի և ՚ի գլուխ զա-
ւակացդ, թէ Հայոց Պատրիարքաց,
թէ համայն միաբանից, թէ բոլոր բու-
սաղէմաբնակ Հայ Ժողովրդոց, և թէ
նոյն աւուր պատահած ուխտաւորաց
կողմանէ, մէկ նախատինք, հայհոյ-
անք, անպատուութիւն, խռովութիւն,
գոնէ մէկ փոքր պակասութիւն մի
տեսած էք արդեօք. ես այս 27 տարւ
ւանըս մէջ չեմ տեսած, հոգւով կը
վկայեմ, դուք ձեր քառասուն և յի-
սուն տարիներուն մէջ պատահածը
ըսէք և կ'ուզէք իմ տեսած 27 տա-
րուան համար ալ վկայեցէք եթէ
բան տեսած էք և կրնաք վկայել : -

Վանի որ իմ խելքս կը հասնի, իմ
մանկութենէս ՚ի վեր, ըսաւ. Հաննա
Պառլոյ, համարէ թէ ամէն տարի
կ'երթամ կուգամ նոյն օրը, ոչ թէ
վերը ձեր յիշածները չտեսայ, այլ և
ոչ ամենափոքր պակասութիւն ան-
գամ չտեսայ և չսեցի. այլ ընդ հա-
կառակը մեծ սխալու, յարգութիւն
մարդասիրութիւն կը տեսնայինք և
կը վայելէինք նոյն օրը ազգովին. ա-
ւելի ճիշդը ըսեմ Չեղ, նոյն աւուր
մեր տեսած բոլոր յարգանաց և ա-
մենայն հանգստութեանց համար մենք
Լատինքս ազգովին զարմայած ենք
թէ, ասոնք ինչ բարի և մարդասէր
մարդիկ են որ այսքան ատենուան
մէջ և ոչ փոքրիկ անարգութիւն ան-

գամ տեսած չեմք, արդեօք ասոնց
մէջ խռովարար, յանդուգն երիտա-
սարդ ևն ևն մարդիկ չկան, այս վան-
քը եկած օրերնիս մեր վայելած հան-
գըստութիւններն և ապահովութիւ-
նը շիտակը խօսելու համար մեր ե-
կեղեցիներուն կամ վանքերուն մէջ
տեսած և վայլած չեմ :

Եւ մեր պէտք եղած պատիւը և
յարգանքը տալէն զկնի թէ իրենց և
թէ Պ. Հիւպատոսին, ելան գը-
նացին ՚ի տեղէս իւրեանց : Եւ զկնի
Լատինաց Պատարագին վերջնալոյն,
բոլոր կղերնին վեր հրաւիրեցինք, ինչ
պէս միշտ կ'ընէինք. եկան նաեւ ա-
մենեքին, առանց բառ մը անգամ ար-
տասանելոյ մեր նոյն անցքերուն վը-
րայօք, մարդասիրաբար եւ ամենայն
սիրով պատուեալ գնացին ՚ի վանս
իւրեանց : Ահա այսպէս վերջացաւ
Վսեմ. Սիւնիֆ էֆէնտի, այն անց-
քը, այն զօրք բերելնին համազօքես-
տով և պաշտօնական աթոռով Պ.
Հիւպատոսին գալ նոյն օրը, թէ և
երկարատեւ եղաւ, և Չեր պատուա-
կան գլուխը ցաւցուցի, բայց իմ
վերաւորեալ սրտիսալ սփոփանք եղաւ.
նա մանաւանդ, որ դուք խնդրեցիք
և յօժարեցաք այս գործին վերաբե-
րեալներն ամենայն պարագայիւք լը-
սել : Հատ գոհ եղան ասոր համար
թէ Վսեմ. Վալի փաշայն եւ թէ
Վսեմ. Սիւնիֆ էֆէնտին, և ըսին
՚ի վաղիւ Պամասկոսի Պ. Հիւպա-
տոսն ալ պիտի գտնուի, դուք ալ
եկէք դարձեալ այս խնդրոյն վրայօք
պիտի խօսիմք : Տեսնանք անոնք ինչ
կ'ըսեն, և դեռ դուք ինչ կ'ըսէք :

Սեր շնորհակալութիւննիս մա-
տուցանելով բաժնուեցանք :

(Ս'նայեալն գալ սփոս)

